«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ինչպե՞ս բարձրացնել աշակերտների սվորելու մոտիվացիան «Հայոց պատմություն» առարկայի դասաժամին»

Հետազոտող ուսուցիչ՝ Հովհաննիսյան Աննա Կառլենի

Ուս. հաստատություն՝ «Մեղրաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՀՐԱԶԴԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....
3

ԳԼՈՒԽ1. ԱՇԱԿԵՐՏԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

1.1 Մոտիվացիա հասկացության ընդհանուր բնութագիրն ու դրա առկայության դերը սովորողի ուսումնառության ընթացքում.....5

1.2 Մոտիվացված աշակերտի հաջողության հասնելու հնարավորությունները «Հայոց պատմության» դասին.....10

ԳԼՈՒԽ 2 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ: «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՍՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

2.1 Սոցիոլոգիական հարցում «Հայոց պատմություն» ուսումնական առարկան դասավանդող ուսուցիչների շրջանում՝ վերաբերող աշակերտի սովորելու մոտիվացիայի բարձրացման
հնարավորություններին.....15

Եզրակացություններ.....1
7

Օգտագործված գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժագիտության կարևորագույն հիմնախնդիրներից է աշակերտի սովորելու մոտիվացիան, վերջինիս դեպի ուսումնառության գործընթաց շահագրգռելը, կրթության հարկն ու կրթված լինելու կարևորությունն ի ցույց դնելը: Մոտիվացված աշակերտ ունենալը պայմանավորված է վերջինիս համար խոստումնալից ապագա նախանշելու, դեպի մասնագիտական ճիշտ կողմնորոշման ուղղորդելու, կյանքին համակողմանիորեն նախապատրաստելու մարտահրավերներով. չէ՞ որ դժվարություններից խուսափող, կյանքի, ուսման, աշխատանքային գործունեության հանդեպ անտարբեր մարդիկ չեն ունենում հաջողություններ, չեն օգտագործում իրենց ներուժը, մնում են ստվերում, ուստի մոտիվացիան անձին առաջ մղող շարժիչ ուժն է և հատկապես կրթական ոլորտում առանցքային դերակատարում ունի:

Մեր երկրում կրթական բարեփոխուներով պայմանավորված՝ հանրակրթական պետական չափորոշչում ամրագրված են դրույթներ, որոնց համաձայն՝ աշակերտների անհատական զարգացման վերաբերյալ նոր պահանջներ են նախանշվում, ինչն էլ ենթադրում է, որ ուսուցիչների համար օրախնդիր է աշակերտին մոտիվացնելը, ոգևորելը, ուսման հանդեպ հետաքրքրությունը մեծացնելը:

Այսպիսով, կարծում ենք, որ հատկապես աշակերտների շրջանում շատ կարևոր է ուսումնառության գործընթացի նկատմամբ գիտակից ու կառուցողական մոտեցման ձևավորումը, ինչի համար կարևոր ու առանցքային նախապայման է, որ ուսումնական առարկան վերջինիս համար լինի հետաքրքիր, աշակերտը ոչ միայն տեսնի, այլ կիրառի, նախագծի, հետազոտի, բացահայտի, վերլուծի ու տրամաբանի: Այսքանով հանդերձ, աշակերտը պետք է նաև խրախուսվի, ուշադրության արժանանա, կարողանա բավարարել սեփական անհատական կարիքներն ու կրթական պահանջմունքները:

Հենց նմանօրինակ աջակցող կրթական միջավայրում է հնարավոր ոգևորված ու մոտիվացված աշակերտներ ունենալ:

Հետազոտության թեմայի արդիականությունը*:* Ներկայումս ուսուցչի համար գերխնդիր է՝ ապահովել կրթության բարձր որակ, աշակերտների համաչափ մասնակցություն դասապրոցեսին, գիտելիքների, կարողունակությունների անցնցում փոխանցում ու ձևավորում, որոնք կրթության որակի բարձրացման առանցքային նախապայմաններն են: Այս ամենն ունենալու համար սովորողը պետք է ունենա սովորելու ցանկություն, մոտիվացիա, առանց որի ներկայիս կրթական բարեփոխումները, որակյալ կրթություն ունենալու բոլոր ջանքերն ուղղակի ի չիք կարող են դառնալ: Հենց աշակերտների մոտիվացիան բարձրացնելու հիմնախնդիրը մանկավարժական գործունեության կենտրոնում դնելու հանգամանքից էլ բխում է մեր հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը*:* Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտների սովորելու մոտիվացիայի բարձրացման մանկաարժական պայմաններն ու հնարավորությունները «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրը*:*

- Ուսումնասիրել մասնագիտական գրականություն թեմայի վերաբերյալ:
- Ծանոթանալ մոտիվացիա հասկացության տեսամեթոդական հիմքերին, դրա դրսևորման առանձնահատկություններին:
- Դիտարկել պատմության դասավանդման ընթացքում մոտիվացված աշակերտ ունենալու առավելությունները՝ առաջադիմության բարձրացման, առողջ մրցակցային մթնոլորտի ապահովման տեսանկյունից:
- Կատարել սոցիոլոգիական հետազոտություն՝ սոց. հարցման տեսքով՝ հիմնախնդրի շուրջ մանկավարժական օրինակելի փորձն ուսումնասիրելու համար:

Սոցիոլոգիական հոտազոտության բազան: Ուսումնասիրությունն անցկացվել է հանրակրթական դպրոցում «Հայոց պատմություն» առարկան դասավանդող թվով 7 ուսուցիչների շրջանում՝ առցանց եղանակով:

ԳԼՈՒԽ1.

ԱՇԱԿԵՐՏԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

1.1 Մոտիվացիա հասկացության ընդհանուր բնութագիրն ու դրա առկայության դերը սովորողի ուսումնառության ընթացքում

«Այն ինչ մարդկային ուղեղը ունակ է մտածել և հավատալ՝ դրան մարդ կարող է հասնել» Նապոլեոն Հիլլ

Մոտիվացիան անհատի հոգեբանության անբաժանելի մասն է, շարժիչ ուժը, որը թույլ չի տալիս կորցնել ակտիվ գործունեությունը որոշակի նպատակի հասնելու ժամանակ: Մոտիվացիան հիմնական հասկացություններից մեկն է, որն օգտագործվում է մարդու վարքի շարժիչ ուժերը բացատրելու համար: Դրա ցանկացած տեսակ կարևոր դեր է խաղում մարդու հոգեբանության և հասարակության մեջ նրա վարքագծի ուսումնասիրության մեջ: Հետազոտողները նշում են, որ աշակերտի սովորելու մոտիվացիայի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ուսումնական հաստատությունը, ուսումնական գործընթացի կազմակերպումը, ուսուցչի մարդկային ու մասնագիտական որակները, աշակերտի և ուսուցչի սուբյեկտիվ բնութագրերը, ուսումնական առարկայի առանձնահատկությունները[1]:

Կրթական նորարարություններով պայմանավորված՝ հանրակթական ուսումնական հաստատությունն այսօր կանգնած է մի շարք մարտահրավերների առջև,

[1] Алтунина И.Р. Мотивы и мотивация социального поведения: Учебное пособие / И.Р. Алтунина. Москва, 2006. 144 с.

որոնցից ամենակարևորը սովորողների հետաքրքրությունների գնահատումն ու բացահայտումն է, ինչպես նաև՝ ուսումնական գործընթացում վերջինիս կրթական կարիքների լիարժեք բավարարումը: Այս հիմնախնդրին կրթական համակարգը բախվեց այն պատճառով, որ առավել նկատելի ու ընդգծված է դարձել աշակերտների անտարբերությունն ուսումնական գործընթացի նկատմամբ, որն իր բացասական ազդեցությունն է բերում կրթության որակի վրա: Բոլորիս էլ պարզ է, որ բամաթիվ աշակերտների համար ուսումնական գործընթացը երբեմն հետաքրքիր չէ, քանի որ նրանցից շատերն իրենց՝ տեղեկատվություն ստանալու պահանջմունքը, հետաքրքրությունները, հասակակիցների հետ շփման և հաղորդակցման կարիքները բավարարում են հատկապես համացանցում, ուր տեղեկատվական հոսքերի ուղիղ միջամտությամբ ուսուցման ավանդական մեթոդների վրա հիմնված դասապրոցեսը վերջինիս գնահատմամբ դառնում է ձանձրալի ու աննպատակ:

Կարծում ենք, որ այս համատեքստում է, որ ավելի է կարևորվում աշակերտներին մոտացնելու, դեպի դպրոց նրա հետաքրքրություններն ուղղելու պատասխանատու գործընթացը, որը հիմնականում դրված է ուսուցչի վրա՝ որպես դասագործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու: Այս խնդիրը հատկապես նկատելի է դառնում դեռահասության տարիքի աշակերտների մոտ: Դեռահասությունը մանկության և հասունության միջև օնտոգենետիկական զարգացման շրջանն է, որը բնութագրվում և հատկանշվում է որակական փոփոխություններով՝ կապված սեռական հասունացման և «մեծահասակների աշարհ» մուտք գործելու հետ: Այս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլ նաև անձնավորության ակնառու հասունացում, որն իրականացվում է շրջապատող իրականության ազդեցությունների ուղեկղությամբ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցեսում[2]:

Հաջորդ կարևոր խնդիրը, որի առաջ կանգնած է ուսումնական հաստատությունը դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումն է, այնպիսի դասեր պլանավորելն ու իրականացնելը, որոնք ունակ կլինեն ուսումնական նյութն աշակերտին մատուցել պատկերավոր, հետաքրքիր: Իսկ ինչպե՞ս անել, որ դասը սկսի հետաքրքրել աշակերտին, վերջինս կարևորի կրթության դերն ու նշանակությունը: Կարծում ենք, որ այսօրվա ուսուցիչն ունի բոլոր հնարավորություններն ու գործիքները հետաքրքիր,

[2] https://www.academia.edu/10964884 Ա Սևումյան, «Դեռահասության տարիքում ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները»:

դինամիկ ու բովանդակալից դասեր պլանավորելու և իրականացնելու համար: Գրեթե բոլոր դպրոցները հագեցած են ուսումնանյութական բազայով, ունեն համակարգչային լսարաններ, միևնույն ժամանակ՝ բոլոր հնարավորությունները ոչ ֆորմալ, սովորողին շահագրգռող դասեր անցկացնելու համար: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.4 կետը սահմանում է. «Մանկավարժական աշխատողը պարտավոր է ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[3]»: Մնում է միայն, որ ուսուցիչը գնա նորարարությունների հետևից՝ իր հետ տանելով նաև աշակերտներին: Կարծում ենք, որ ուսուցման համագործակցային մեթոդներով պլանավոված դասապրոցեսը նույնպես կարող է նպաստել սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացմանը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը[4]:

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական, աջակցող փոխկախվածության ապահովումը, որտեղ խմբի անդամները պատրաստակամ են միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու: Այստեղ սովորողի ջանքերն ուղղված են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, դեպի հաղթանակ տանող ճանապարհը միասին անցնելուն: Համագործակցային մեթոդների կիրառության միջոցով ուսուցիչը կարող է նաև պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտների միջև ստեղծվի հանդուրժողականության, փոխվստահության, փոխօգնության մթնոլորտ:
Միջառարկայական կապերի ապահովմամբ դասերի անցկացումը ևս մի եղանակ է սովորողին ոգևորելու և նրա հետաքրքրությունը մեծացնելու համար: Նմանօրինակ դասերը կարող են բարձրացել ուսուցման գիտականությունը, զարգացնել սովորողների

[3] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.4:
[4] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

մետաճանաչողությունը, մտածողությունը, տալ աշակերտին գործնական կարողություններ: Ընդգծենք նաև մեկ այլ կարևոր ու արդիական հանգամանք՝ աշակերտներին համացանցային հարթակներից օգտվելու ուղղորդումն ուսուցչի կողմից:: Տեղեկատվական տեխնոլոգիաները որքան էլ կարող են դրական ազդել աշակերտների զարգացման վրա, նույնքան վտանգավոր են՝ պայմանավորված տեղեկատվական հոսքերի անկառավարելիությամբ ու տեղեկատվության առատությամբ: Հաճախ համացանցը կարող է բացասական իրողությունների պատճառ դառնալ, մինչդեռ ճիշտ ուղղորդման պարագայում այն կարող է դիտարկվել որպես տեղեկատվության ստացման կարևոր հարթակ:

Այսպիսով, կարծում ենք, որ աշակերտների համար ուսումնական գործընթացը հետաքրքիր է, արդյունավետ, նրանք ունեն սովորելու մոտիվացիա մի շարք գործոնների առկայության պարագայում, դրանցից են.

- բարոյահոգեբանական առողջ միջավայր,
- հասանելի, մատչելի և աջակցող ուսումնական միջավայր
- սեփական հետաքրքրությունները դասի ժամանակ գտնելու և բավարարելու հնարավորություն
- ուսուցչի կողմից գնահատված լինելու, խրախուսվելու զգացողություն
- դասընկերների հետ հարաբերություններում կայունություն, փոխօգնության, փոխվստահության մթնոլորտ,
- պատկերվոր, դինամիկ, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած դասապրոցես
- ինքնուրույն գործելու, նախաձեռնելու, ընտրելու, կարծիք հայտնելու հնարավորություն
- ուսուցչի դրական կերպար
- առողջ մրցակցության առկայություն
- ձևավորող գնահատման գործիքների կիրառություն

Կարծում ենք, որ նմանօրինակ գործելաոճը հենց այն ուղին է, որով կարելի է շահել սովորողի վստահությունը, մոտիվացնել ու ոգևորել վերջինիս: Պատվոգրերի, շնորհակալագրերի միջոցով նույնպես կարելի է մոտիվացնել աշակերտներին: Չէ՞ որ

գնահատված լինելը կարող է առաջ մղել, առավել մեծ հաղթանակների դրդել վերջիններիս, ուստի ուսուցիչը պետք է չխուսափի գովասանքի խոսքեր հնչեցնելուց:

Վերահաստատենք մեր այն պնդումը, որ մոտիվացված, կրթության հարկն իմացող, սեփական ուսումնառությանը պատասխանատու մոտեցող աշակերտներ ձևավորելու համար իր առանցքային դերն ունի նորարար ու կարողունակ ուսուցիչը, նպատակային պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Որպեսզի մանկավարժը դասարանում կարողանան ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, պետք է մեծ ուշադրություն դարձնի անհրաժեշտ բնութագրիչներին, որոնք են.

1. Դասարանում երեխաների միջև առկա են աշխույժ, բարիդրացիական փոխհարաբերություններ, լավատեսական տրամադրություն, փոխհամագործակցություն: Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքներ: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը, իսկ քննադատությունն իրականացվում է նուրբ տոնով:
2. Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտ: Այստեղ մշտապես բոլորն իրենց պաշտպանված են զգում:
3. Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակները, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արդարամտությունը, անշահախնդրությունը և այլն:
4. Սովորողներն ակտիվ են, աշխույժ: Նրանք արագ արձագանքում են, եթե պետք է ինչ-որ օգտավետ աշխատանք կատարել[5]:

Աշակերտների մոտ սովորելու մոտիվացիայի բարձրացման վերաբերյալ տեսամեթոդական ուսումնասիրությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

- Աշակերտին պետք է տալ «ազատություն». առաջադրանքների ընտրության ազատություն, խոսքի ազատություն, որոշումներ կայացնելու ազատություն, քանի որ դա նպաստում է պատասխանատվության բարձրացմանը:

[5] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013, էջ 10:

- Աշակերտին պետք է անպայման վերահսկել. ձնողի հետ համագործակցել, հետադարձ կապի միջոցով բացահայտել վերջինիս ցանկությունները, նախասիրությունները, կրթական կարիքներն ու դժվարությունները:
- Աշակերտին պետք է հարգել. պետք է պաշտպանել աշակերտի իրավունքները, շահերը, բացառել բուլինգը, խտրականությունը:
- Ընկերական և համագործակցային միջավայրը նվազեցնում է անհաջողության վախը և խրախուսում աշակերտներին ավելի շատ աշխատել:
- Հաջողության իրավիճակի ստեղծումն օգնում է մեծացնել հաջողության սովորելու մոտիվացիան:

1.2 Մոտիվացված աշակերտի հաջողության հասնելու հնարավորությունները «Հայոց պատմության» դասին

Կրթության միջոցով հնարավոր է հասնել բարոյական բարձր արժեհամակարգով, մտածող, կշռադատող հասարակության ձևավորմանը: Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքների կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, ուստի բարձր աշխատունակությունը, սեփական ուսումնառության հանդեպ հետաքրքրութունն ու մոտիվացիան շատ կարևոր հանգամանքներ են կրթության մեջ հաջողության հասնելու համար: Այս համատեքստում կարևոր է յուրաքանչյուր ուսումնական առարկա, քանի որ թե՛ հասարակակգիտական առարկաները, թե՛ ԲԴՃՄ կրթությունն ու օտար լեզուների իմացությունը ձևավորում են համակողմանիորեն զարգացած, աշխարհայացքի լայն շառավղով քաղաքացիներ, ովքեր երկրի ապագա զարգացնողներ ու շենացողներն են:

Նշված առարկաների շարքում իր կարևոր ու առանցքային տեղն ու դիրքն ունի նաև «Հայոց պատմությունը»: «Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու

քաղաքացու ձևավորմանը[6]: Ի վերջո, Հայոց պատմության իմացությամբ ձևավորվում է աշակերտի ազգային ինքնագիտակցությունը, սեփական դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձի ու քաղաքացու դաստիարակությունը:

Տեղին է նշել 20-րդ դարի մեծագույն պատմավիպասան Ռաֆֆին. «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան»: Մեր երկրի համար մարտահրավերային այս պատմաքաղաքական ժամանակաշրջանն առավել քան կարիք ունի սեփական պատմությունն իմացող, անցյալի հաղթանակներն արժևորող և պարտություններից դասեր քաղող սերնդի: Եվ որպեսզի աշակերտն ավելի ոգևորվի, հետաքրքրվի ուսումնական գործընթացով, հարկ է, որ ուսուցիչը հաշվի առնի վերջինիս դերակատարումը դասի ընթացքում: Որքան աշակերտը շատ է ներգրավվում տարատեսակ գործունեության ձևերի մեջ, հնարավորություն ունենում խոսելու, հիմնավորելու, փաստեր ներկայացնելու, պատճառահետևանքային կապեր առաջ քաշելու, այնքան վերջինիս սովորելու, դասին մասնակից դառնալու մոտիվացիան ավելի է բարձրանում: Կարծում ենք, որ աշակերտին նման հնարավերություն է տալիս հենց աշակերտակենտրոն ուսուցումը, ժամանակակից կրթական տեխնոլոգիաները, որոնցից կառանձնացնենք ուսուցման նախագծային մեթոդը: Բավականին արդյունավետ ենք համարում նախագծային աշխատանքի իրականացումը Հայոց պատմության դասերին, որը կարող է ապահովել աշակերտների անկախ, ինքնուրույն աշխատանքային գործունեությունը: Ուսուցման նախագծային մեթոդը մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու միջոց է, իսկ նախագծային աշխատանքը՝ հատուկ հաջորդականությամբ առաջադրանքի միջոցով որևէ շոշափելի ու առարկայական վերջնարդյունքն է[7]: Նախագծային մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս աշակերտներին մեկ աշխատանքային գործունեության ընթացքում միանգամից զարգացնել համալիր կարողունակություններ, հավաքել համակողմանի գիտելիքներ ուսումնասիրվող թեմայի շրջանակներում: Այստեղ աշակերտն ինքնուրույն կամ խմբային եղանակով կատարում է հետազոտական բնույթի գործունեություն՝ առանց ուսուցչի անմիջական օժանդակության. վերջինս բացառապես ուղղորդողի դերում է հանդես գալիս: Հայոց

[6] Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ:
[7] Полат Е. С. Метод проектов // Метод проектов: науч.-метод. сб. / БГУ. Центр проблем развития образования. – Минск: РИВШ БГУ, 2003. – С. 39–47.

պատմության դասին նախագծային աշխատանքի իրականացումը առաջին հերթին աշակերտի մոտ հնարավոր է դարձնում սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություններ ի ձևավորումը[8], որոնք առանցքային նշանակություն ունեն ինքնուրույնության խթանման համար, մինչդեռ ավանդական ուսուցման պարագայում սովորողը պասիվ է, ինչ էլ հիմնականում պատճառ է դառնում մոտիվացիայի պակասի:Դիտարկենք «Հայոց պատմություն» ուսումնական առարկայից նախագծային աշխատանքի օրինակ:

Նախագծային աշխատանք

- **Դասարան՝ 8-րդ**
- **Թեմա՝ «Հայոց ցեղասպանությունը»**
- **Նախագծի անվանումը՝ «Արդարության հետքերով»**
- **Աշխատանքի տևողությունը՝ 1 ամիս**

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ձեռք բերել գիտելիքներ Հայոց ցեղասպանության (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, , ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր) վերաբերյալ, ըմբռնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է:

Հաղթահարել զոհ լինելու բարդույթները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները:

Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

[8] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր որոշում«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:



Որպես նախագծային աշխատանքի մեկնարկ՝ աշակերտները կայցելեն Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ «Ծիծեռնակաբերդ», ծաղիկներ կխոնարհեն անմեղ զոհերի հիշատակին, կծանոթանան թանգարանին ցուցանմուշներին: Այցելությունը կօգնի, որ սովորողներն առավել պատկերավոր պատկերացնեն արհավիրքի մասշտաբներն ու ավելի պատասխանատու մոտենան աշխատանքին:

Որպես ուսումնաօժանդակ նյութ՝ ուսուցիչը կուղղորդի աշակերտներին օգտվել Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայքից՝/http://www.genocide-museum.am/arm/, որտեղից նրանք կարող են ծանոթանալ պատմական փաստաթղթերին, վերապրողների ու ականատեսների հուշերին, միսիոներների ավանդին՝ հայ որբերի փրկության գործում: Նախագծային աշխատանքի իրականացումը կօգնի աշակերտներին դուրս գալ դասագրքային տիրույթից, հավաքել տեղեկություններ հայոց ցեղասպանության դրա նախադրյալների, պատճառների ու հետևանքների վերաբերյալ: Աշակերտները կուսումնասիրեն նաև մեդիա դաշտը՝ ծանոթանալու համար միջազգային կազմակերպությունների ու առանձին երկրների

դիրքորոշումներին՝ վերաբերող «Հայ դատի» և Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

- Աշակերտներն առցանց հարթակում կփնտրեն, կտեղայնացնեն ու կմշակեն անհրաժեշտ տեղեկատվություն «Նեմեսիս» գործողության մասին՝ ուսումնասիրելով Սողոմոն Թեհրելյանի, Ավ. Իսահակյանի, Շահան Նաթալու գործունեությունը:
- Կանդրադառնան նաև «Կարմիր կիրակի» չարաբաստիկ օրվա իրադարձություններին:
- Կուսումնասիրեն հայ մտավորականների տեղահանությունը ապրիլի 24-ին, որի ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ համայնքի առաջնորդները, իսկ հետագայում նաև կայսրության այլ համայնքների հայտնի ներկայացուցիչները ձերբակալվեցին ու սպանվեցին: Այստեղ միջառարկայական կապը «Հայ գրականություն» առարկայի հետ ակնհայտ է, քանի որ 1915 թվականի ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականներից էին նաև բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ՝ Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Զարդարյան, Արտաշես Հարությունյան, Սիամանթո:
- Կհավաքեն և կմշակեն տեղեկություններ այլ ցեղասպանությունների վերաբերյալ, զուգահեռներ կտանեն Ադոլֆ Հիտլերի և Երիտթուրքերի պարագլուխների միջև:
- Տեղեկություններ կհավաքեն նշանավոր հայդուկների, միսիոներների, հայ գաղթականներին աջակցող այլազգիների մասին:
- Կծանոթանան վերապրողների պատմություններին:
- Առցանց քարտեզի վրա կուսումնասիրեն հայ հալածյալ գաղթականների ճանապարհները:

Որպես աշխատանքի վերջնական ներկայացման տարբերակ՝ կնտրվի զեկույցի ներկայացումն ու սահիկաշարը: Այսպիսով, կարող ենք ասել, որ նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում՝ սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել անսահմանափակ

գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ և որպես վերջնարդյունք, կարծում ենք, կբարձրանա աշակերտի սովորելու մոտիվացիան: Աշակերտը նմանօրինակ աշխատանքի ընթացքում կդառնա հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն: Միևնույն ժամանակ կզարգանան աշակերտների պատմական մտածողությունը, համադրելու, համեմատելու, պատճառահետևանքային կապեր տեսնելու, դիրքորոշում հայտնելու կարողությունները

Մեծ Եղեռն

Հոլոքոստ

Կամբոջայի ցեղասպանություն

Ռուանդայի ցեղասպանություն

Եզդիների ցեղասպանություն

ԳԼՈՒԽ 2

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ: «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՍՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

2.1 Սոցիոլոգիական հարցում «Հայոց պատմություն» ուսումնական առարկան դասավանդող ուսուցիչների շրջանում՝ վերաբերող աշակերտի սովորելու մոտիվացիայի բարձրացման հնարավորություններին

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն: Տվյալների հավաքագրման համար անց է կացվել

սոց. հարցում «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի ուսուցիչների շրջանում, որի նպատակն էր.

- ✔ Ուսումնասիրել, հավաքագրել և վերլուծել ուսուցիչների կարծիքները «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում աշակետների սովորելու մոտիվացիայի բարձրացման վերաբերյալ:
- ✔ Համաձայն հարցված ուսուցիչների դիտարկումների՝ քննության առնել նախագծային աշխատանքի առավելությունները՝ որպես աշակերտների մոտիվացիայի բարձրացման միջոց

Հարցման արդյունքների վերլուծություն եվ ամփոփում

Հարցաթերթիկ ուսուցիչների համար

N	Հարցադրում	Պատասխաններ
1	**Արդյունավե՞տ է արդյոք նախագծային աշխատանքի իրականացումը «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում՝ որպես աշակերտներին մոտիվացնելու միջոց:** ☐ **Այո** ☐ **Ոչ**	
2	**Նախագծային աշխատանքի իրականացման ընթացքում առկա՞ է արդյոք թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն աշակերտների միջև:** ☐ **Այո** ☐ **Կան դժվարություններ**	
3	**Արդյոք աշակերտները հաճույքո՞վ են մասնակցում առարկայի դասաժամերին:** ☐ **Այո** ☐ **Ոչ** ☐ **Երբեմն**	

4	**Աշակերտների սովորելու մոտիվացիան կարևոր համարու՞մ եք ուսումնական գործընթացում:** ☐ **Այո** ☐ **Ոչ** ☐ **Երբեմն**	
5	**Տիրապետու՞մ եք աշակերտներին հետաքրքրելու, մոտիվացնելու մանկավարժական պայմաններին:** ☐ **Այո** ☐ **Ինչ-որ չափով**	

Սոցիոլոգիական հետազոտության շրջանակներում իրականացված սոց. հարցման արդյունքում պարզ դարձավ.

- Ուսուցիչների որոշ մասը դժվարություններ ունի աշակերտի սովորելու մոտիվացիան բարձրացնելու առնչությամբ:
- Հարցման մասնակից ուսուցիչների գերակշիռ մասը դիտարկում է նախագծային աշխատանքի իրականացումը՝ որպես աշակերտի սովորելու մոտիվացիան բարձրացնելու միջոց:
- Ուսուցիչների գերակշիռ մասն այն կարծիքին է, որ նախագծային աշխատանքի իրականացման ընթացքում աշակերտների միջև առկա է թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն:

Այսպիսով, կարելի է պնդել, որ մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումն արդյունավետ էր, քանի որ կարողացանք վերահաստատել ու հիմնավորել աշխատանքի տեսական մասում մեր կատարած պնդումներն առ այն, որ ուսուցման ժամանակակից ու աշակերտակենտրոն մոտեցումները բավականին արդյունավետ են աշակերտների սովորելու մոտիվացիան բարձրացնելու համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության ընթացքում իմ խնդիրն էր հասկանալ, թե արդյոք աշակերտի սովորելու մոտիվացիան կրթության մեջ ճանրակշիռ գործոն է և ինչպես է ազդում այն աշակերտի առաջադիմության, աշխատունակության բարձրացման և, առհասարակ, կրթության որակի վրա: Տեսական մասում համակողմանիորեն անդրադարձ կատարեցինք մոտիվացիա երևույթին՝ մատնանշելով, որ դրա առկայությունը մեծ կարևորություն ունի հաջողության հասնելու, խոստումնալից արդյունքներ ունենալու համար:

Հայոց պատմության դասավանդման ընթացքում ուսուցիչը նույնպես իր առջև պետք է դնի աշակերտին հետաքրքրելու, ոգևորելու, մոտիվացնելու հիմնահարցերը, որպեսզի տեղեկատվակյան այս դարում դասապրոցեսը աշակերտի համար չդառնա ձանձրալի ու միապաղաղ:

Իմ կողմից կարևորվեց ուսուցչի դերը՝ որպես նորարար, ժամանակակից կրթական միտումները գնահատող, ուսումնական գործընթացում սովորողի դերն արժևորող կրթության կազմակերպող և դասի համար պատասխանատվություն կրող անձի, ում ջանքերն ու աշխատանքային կառուցողական ռազմավարությունը կարող է իրապես օգնել կրթության որակի բարելավանը: Վստահ ենք, որ արդի կրթական բարեփոխումներին ընդառաջ գնալով՝ ուսուցիչը կկարողանա աշակերտին առարկայորեն ի ցույց դնել, որ գիտելիքը ուժ է, կարողունակ և ինքնուրույն անձը՝ հաջողակ, սովորելը՝ բարեկեցիկ, անվտանգ ու ապահով կյանքի միակ բանալին է: Թերևս մնում է միայն աշխատել, սովորելու և առաջ գնալ՝ դեպի կրթական նոր հաղթանակներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ:
3. https://www.academia.edu/10964884 Ա Սևումյան, «Դեռահասության տարիքում ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները»:
4. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:
5. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013:
6. Алтунина И.Р. Мотивы и мотивация социального поведения: Учебное пособие / И.Р. Алтунина. Москва, 2006. 144 с.